# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 4/3**

«14» ապրիլի 2023թվականի    գ. Տեղ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՔՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ**

**ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝**

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարագյոզյանը

**ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝**

**Տեղ համայնքի ավագանու թվով 9(ինը) անդամներ՝**

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Ղուկասյան  Արագած Արշավիրի
4. Միքայելյան Աննա Միքայելի
5. Սիմոնյան  Լորա Ռաֆիկի
6. Առաքելյան Վահե Վարդանի
7. Ջեյնալյան Մասիս Արամայիսի
8. Դանիելյան ՍևադաՎիտալիկի
9. Դալլաքյան Արման Յուրիկի

**Բացակայում են Տեղ համայնքի ավագանու թվով 6(վեց) անդամներ՝ Կարեն Բաղդասարյանը, Արգամ Հովսեփյանը,Հայրապետ Հայրապետյանը, Նազիկ Բաղդասարյանը, Գևորգ Մարտիրոսյան և Ասպետ Գալստյանը**, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայքնապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար՝ Աստղիկ Ղարագյոզյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 9 (ինը)** անդամները:

**ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝**

Համայնքի ղեկավարի խորհրդական Մարտունիկ Պողոսյանը, Տեղ համայնքի անասնաբույժ Արագած Ղուլունցը, Արավուսի վարչական ղեկավար Արթուր Ջհանգիրյանը, Քարաշենի

վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, ՀՈԱԿ-ի ժամանակավոր պաշտոնակատար՝ Արտուր Գրիգորյան, Տեղ համայնքի աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

**ԼՍԵՑԻՆ.**

**1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ և 65-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 14-ի 4-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման 1-ին եռամսյակի ընթացքի մասին.

2. <<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի նախկին ղեկավարի լիազորությունները դադարեցնելու և գործադիր մարմնի նոր ղեկավար նշանակելու մասին.

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի 4-րդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

**2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ**

**(Զեկուցող՝ Ա. Ղարագյոզյան)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետով, համայնքի ավագանին **որոշում է.**

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի հաղորդումը Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի

բյուջեի 2023 թվականի կատարման առաջին եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-6 հատվածների:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 8** **դեմ – 1** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 3. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ՝ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով <<Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերների պետական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի կողմ-, դեմ-, ձեռնպահ- քվեարկության արդյունքներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Դադարեցնել համայնքային կառավարչական հիմնարկի՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի նախկին ղեկավար Արտակ Արշավիրի Բաղդագյուլյանի լիազորությունները, այն վերապահելով Տեղի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ Աստղիկ Արթուրի Ղարագյոզյանին․ անձնագիր 001028406, տրվ․05.05.2014թ., 032-ի կողմից, հասցե ք․ գորիս Սյունիքի 179/8, 3201 Սյունիք Հայաստան

2. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարին՝ դիմում ներկայացնել ՀՀ ԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ՝ իրավաբանական անձի պետական գրանցման N01Բ1083452 վկայականը նոր խմբագրությամբ տպագրելու մասին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 8** **դեմ – 1** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

**ԼՍԵՑԻՆ.**

## 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական չորրորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի մայիսի 19-ին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ**

**Կողմ - 9** **դեմ – 0** **ձեռնպահ – 0**

**Որոշումն ընդունվեց**

Օրակարգի բոլոր հարցերը սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14:50

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

------------------ Դավիթ Ղուլունց
------------------ Արամ Միրզոյան
------------------ Վահե Առաքելյան
------------------ Արման Դալլաքյան
------------------ Արագած Ղուկասյան
------------------ Աննա Միքայելյան
------------------ Լորա Սիմոնյան
------------------ Սևադա Դանիելյան
------------------ Մասիս Զեյնալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՍՏՂԻԿ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ